***Կարգապահական գործ թիվ ԿԳ-23027***

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**ՓԱՍՏԱԲԱՆ ԳԵՈՐԳԻ ԳՐԻԳՈՐԻ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի Գուրգեն Թորոսյանի և Արաքս Վարդանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Գեորգի Գրիգորի Մելիքյանին (արտոնագիր՝ թիվ 1798), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

**Պ Ա Ր Զ Ե Ց՝**

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Վարդան Ղուկասյանը **(այսուհետ՝ նաև Դիմող),** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ նաև Պալատ),** հայտնել է, որ 2015թ. փաստաբան Գեորգի Մելիքյանը **(այսուհետ՝ նաև Փաստաբան կամ Պատասխանող)** ստանձնել է իր շահերի պաշտպանությունը թիվ ԵԿԴ/0120/01/15 քրեական գործի շրջանակներում:

Դիմողը հայտնել է նաև, որ թիվ 59100223 քրեական վարույթի շրջանակներում Տիգրան Արզաքանցյանի հայտարարության հիման վրա իրեն առաջադրվել է մեղադրանք: Նշված քրեական վարույթում փաստաբան Գեորգի Մելիքյանը ստանձնել է Տիգրան Արզաքանցյանի շահերի պաշտպանությունը:

Դիմողի պնդմամբ, նա՝ որպես փաստաբան Գեորգի Մելիքյանի նախկին վստահորդ չի տվել իր գրավոր համաձայնությունը, որպեսզի փաստաբանն իրականացնի Տիգրան Արզաքանցյանի իրավունքների և շահերի պաշտպանությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 16.08.2023 թվականին Դիմողին առաջարկվել է Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ

մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Դիմողը լրացուցիչ դիրքորոշում կամ ապացույց չի ներկայացրել:

**2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>**

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Գեորգի Մելիքյանին առաջարկվել է «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ներկայացնել բացատրություն Վարդան Ղուկասյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 18.07.2023թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ թիվ ԵԿԴ/0120/01/15 քրեական գործի շրջանակներում իրականացրել է Վարդան Ղուկասյանի շահերի պաշտպանությունը: Հետագայում փաստաբանը հրաժարվել է հանձնարարության կատարումից առաջացած տարաձայնությունների պատճառով, մասնավորապես՝ վստահորդը հրաժարվել է արդարացման հիմքով վերաքննիչ բողոքից, ինչպես նաև վերջինիս մոր կողմից անվստահություն է դրսևորվել փաստաբանի նկատմամբ:

Փաստաբանը պնդում է, որ թեև Վարդան Ղուկասյանը հանդիսացել է իր նախկին վստահորդը՝ ստանձնելով Տիգրան Արզաքանցյանի շահերի պաշտպանությունը, որևէ կերպ չի խախտել Օրենքի պահանջները, քանի որ ներկայիս գործը որևէ առնչություն չունի թիվ ԵԿԴ/0120/01/15 քրեական գործի հետ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 16.08.2023 թվականին Փաստաբանին առաջարկվել է Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Փաստաբանը լրացուցիչ դիրքորոշում կամ ապացույց չի ներկայացրել:

**3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի 24.07.2023թ. թիվ 180-Ա/ԿԳ-23027 որոշմամբ փաստաբան Գեորգի Մելիքյանի նկատմամբ Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագրք)** 3.2.2 ենթակետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

26.07.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

**3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>**

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

**4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>**

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 14.09.2023թ. կազմել է

եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել հետևյալ փաստերը.

- Փաստաբանը նախկինում ներկայացրել է Դիմողի իրավունքներն ու շահերը թիվ ԵԿԴ/0120/01/15 քրեական գործի շրջանակներում:
- Փաստաբանը ներկայումս ներկայացնում է Տիգրան Արզաքանցյանի իրավունքներն ու շահերը, ում հաղորդման հիման վրա հարուցված թիվ 59100223 քրեական գործի շրջանակներում Դիմողին մեղադրանք է առաջադրվել:
- Կարգապահական գործի շրջանակներում չի ներկայացվել որևէ գրավոր փաստաթուղթ, որով կհավաստվեր, որ Դիմողը գրավոր համաձայնություն է տվել Պատասխանողին՝ իր հետ շահերի հակասություն ունեցող անձի շահերը ներկայացնելու վերաբերյալ:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 14.09.2023թ.:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել 19.10.2023թ. ժամը 19:30-ին և 09.11.2023թ. ժամը 20:00-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

**5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>**

**Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.**

– Փաստաբանը նախկինում ներկայացրել է Դիմողի իրավունքներն ու շահերը թիվ ԵԿԴ/0120/01/15 քրեական գործի շրջանակներում: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, ինչպես նաև թիվ ԵԿԴ/0120/01/15 քրեական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

– Փաստաբանը ներկայումս ներկայացնում է Տիգրան Արզաքանցյանի իրավունքներն ու շահերը, ում հաղորդման հիման վրա հարուցված թիվ 59100223 քրեական գործի շրջանակներում Դիմողի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել (դիմողը հանդիսանում է մեղադրյալ): *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով: Ընդ որում, Փաստաբանը չի հերքել թիվ 59100223 քրեական գործով Դիմողի՝ որպես հակառակորդ կողմ հանդես գալու հանգամանքը:*

– Սույն կարգապահական գործի շրջանակներում չի ներկայացվել որևէ գրավոր փաստաթուղթ, որով կհավաստվեր, որ Դիմողը գրավոր համաձայնություն է տվել Պատասխանողին՝ իր հետ շահերի հակասություն ունեցող անձի շահերը ներկայացնելու վերաբերյալ: *Նշված փաստը հաստատվել է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով:*

**6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>**

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Գեորգի Մելիքյանը փաստաբան է հանդիսանում 14.07.2014թ. թվականից, և 2018-2023թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

**7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>**

**Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Գեորգի Գրիգորի Մելիքյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.2.2 ենթակետի խախտման համար, հետևյալ պատճառաբանությամբ.**

**Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի համաձայն՝** *1. Փաստաբանը պարտավոր է առաջնորդվել առնվազն հետևյալ վարքագծի կանոններով. (…)*

*5) ցույց չտալ իրավաբանական օգնություն, երբ՝(…)*

*դ. Պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը. (…):*

**Կանոնագրքի 3.2.2-րդ ենթակետի համաձայն՝** *Փաստաբանն իրավունք չունի իրավական օգնություն ցույց տալ երկու կամ ավելի վստահորդի նույն հարցով, եթե նրանց շահերի միջև հակասություն կա: Փաստաբանը պարտավոր է ցույց չտալ իրավաբանական օգնություն, երբ պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը (…*):

Պալատի հանձնաժողովը գտնում է, որ Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.2.2-րդ ենթակետում նշված իրավական հետևանքը հնարավոր է կիրառել, եթե վարքագծի կանոնի մեջ նշված հետևյալ փաստերն առկա լինեն, այն է՝

- Առկա է նախկին վստահորդ.
- Առկա է այլ (նոր) վստահորդ.
- Փաստաբանը իրավաբանականօգնություն է ցույց տալիս այլ (նոր) վստահորդին.
- Նախկին և այլ (նոր) վստահորդների շահերը հակասում են.
- Նախկին վստահորդը համաձայնություն չի տվել փաստաբանին իր այլ վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալ իր դեմ:

Վերլուծելով վերը նշված կանոնների պահանջները՝ Հանձնաժողովը գտնում է, որ Պատասխանող Գեորգի Մելիքյանի վարքագիծը գնահատելու համար անհրաժեշտ է ստանալ հետևյալ իրավական հարցադրումների պատասխանները.

1. **Հանդիսացել է արդյո՞ք Վարդան Ղուկասյանը Գեորգի Մելիքյանի վստահորդը:**
2. **Արդյո՞ք սույն գործով առկա վստահորդի շահերը հակասում են նախորդ վստահորդի շահերին:**
3. **Արդյո՞ք Գեորգի Մելիքյանը իրավաբանական օգնություն է ցույց տվել**

**Վարդան Ղուկասյանի հակառակորդ կողմին:**

**4. Արդյո՞ք առկա է նախորդ վստահորդի համաձայնությունը, որ Պատասխանողն իրավաբանական օգնություն տրամադրի նրա հետ հակադիր շահեր ունեցող անձանց:**

Պատասխանելով վերը թվարկված առաջին հարցադրմանը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ 2015թ. թիվ ԵԿԴ/0120/01/15 քրեական գործով Փաստաբան Գեորգի Մելիքյանը հանդիսացել է ամբաստանյալի դատավարական կարգավիճակ ունեցող Վարդան Ղուկասյանի պաշտպանը:

Հանձնաժողովը արձանագրում է, որ Օրենքում և Կանոնագրքում նշված վստահորդը այն անձն է, որին իրավաբանական օգնություն է ցույց տալիս փաստաբանը:

Պատասխանելով վերը թվարկված երկրորդ հարցադրմանը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը ներկայումս ներկայացնում է Տիգրան Արզաքանցյանի իրավունքներն ու շահերը, ում հաղորդման հիման վրա հարուցված թիվ 59100223 քրեական գործի շրջանակներում Դիմողին մեղադրանք է առաջադրվել, հետևաբար նրանց շահերի միջև առկա է հակասություն:

Պատասխանելով վերը թվարկված երրորդ հարցադրմանը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ թիվ 59100223 քրեական գործի շրջանակներում Տիգրան Արզաքանցյանի իրավունքներն ու շահերը ներկայացնում է Գեորգի Մելիքյանը: Նշված գործով, ինչպես վերը նշվել է, Վարդան Ղուկասյանը հանդիսանում է Տիգրան Արզաքանցյանի հակառակորդ կողմը և նրանց շահերի միջև առկա է հակասություն:

Պատասխանելով վերը թվարկված չորրորդ հարցադրմանը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքով նախատեսված համաձայնությունը հարկավոր է բոլոր դեպքերում, երբ առկա են հակադիր շահեր փաստաբանի ներկա և նախկին վստահորդների միջև, ինչը փաստաբանի համար առաջացնում է պարտականություն՝ իր նախկին վստահորդի գրավոր համաձայնությունը ստանալուց հետո միայն իրավաբանական օգնություն ցույց տալ նույն հարցով կամ գործով նոր վստահորդին: Փաստաբանի սույն պարտականությունը բխում է իր վստահորդի շահերով առաջնորդվելու և բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց տալու ընդհանուր պարտականությունից:

Սույն կարգապահական գործի շրջանակներում չի ներկայացվել որևէ գրավոր փաստաթուղթ, որով կհավաստվեր, որ Դիմողը գրավոր համաձայնություն է տվել Պատասխանողին իր հետ շահերի հակասություն ունեցող անձի շահերը ներկայացնելու վերաբերյալ:

Պատասխանելով վերոհիշյալ 1-4 ենթակետերում նշված հարցերին, Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի կողմից խախտվել են Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի և Կանոնագրքի 3.2.2 ենթակետի պահանջները:

Հանձնաժողովը ցանկանում է նաև անդրադառնալ 20.10.2023թ. Փաստաբանի կողմից ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովին ներկայացված ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Լ.Քաջազնունու 20.10.2023թ. գրությանը:

Օրենքի 39.5-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝

*4. սպասարկող անձնակազմի աշխատակիցն իրավունք ունի փաստաբանից կամ կարգապահական խախտման մասին հաղորդում (դիմում, տեղեկանք, միջնորդություն) ներկայացրած անձից (մարմնից) պահանջելու ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, որոնք տվյալ անձանց (մարմինների) ազդեցության ոլորտում են կամ պետք է լինեն: Ապացույց ներկայացնելու պահանջը ենթակա է կատարման այն ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում:*

*5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում կատարման անհնարինության դեպքում պահանջի հասցեատերը գրավոր դիմում է փաստաբանների պալատի նախագահին՝ հայցելով կատարման նոր ժամկետ կամ հայտնելով որոշման կատարման անհնարինության մասին՝ նշելով անհնարինության պատճառները: Փաստաբանների պալատի նախագահն իր որոշմամբ կարող է սահմանել նոր ժամկետ կամ հարգելի ճանաչել ապացույց չներկայացնելու պատճառները:*

*6. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում պահանջված ապացույցը չներկայացնելու կամ ապացույց ներկայացնելու համար նոր ժամկետ չսահմանելու կամ ապացույցը չներկայացնելու պատճառները հարգելի չճանաչելու դեպքում դա կարող է մեկնաբանվել ի վնաս պահանջի հասցեատիրոջ, եթե ապացուցման ենթակա փաստը, որի վերաբերյալ անհրաժեշտ էր պահանջվող ապացույցը, մնում է չապացուցված:*

Սույն գործով կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ ներկայացնելու մասին 16.08.2023թ. պահանջը Փաստաբանը ստացել է 31.08.2023թ.:

Գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում Փաստաբանը լրացուցիչ դիրքորոշում կամ ապացույց չի ներկայացրել:

Փաստաբանը դիմում չի ներկայացրել փաստաբանների պալատի նախագահին՝ հայցելով կատարման նոր ժամկետ կամ հայտնելով որոշման կատարման անհնարինության մասին, հետևաբար հարգելի չեն ճանաչվել նաև ապացույց չներկայացնելու պատճառները:

Բացի այդ, Հանձնաժողովին ներկայացնելով ՀԿԳ ավագ քննիչ Լ.Քաջազնունու 20.10.2023թ. գրությունը՝ Փաստաբանը չի ներկայացրել ապացույց ներկայացնելու համար ժամկետի բացթողումը հարգելի համարելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի կողմից ներկայացված 20.10.2023թ. գրությանը ներկայացվել է Օրենքի 39.5-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի պահանջների խախտմամբ, ուստի՝ ներկայացված ապացույցը չի ընդունվում:

Այդուհանդերձ, Հանձնաժողովը, կայացվող Որոշման օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ Փաստաբանի հնարավոր բոլոր կասկածները փարատելու, այդ թվում նաև կանխելու այն համոզմունքի ձևավորումը, թե վերը նշված ապացույցին անդրադարձ կատարվելու պարագայում կկայացվեր այլ ելքով Որոշում, հարկ է համարում նշել հետևյալը.

Սույն գործով Գեորգի Մելիքյանը թիվ ԵԿԴ/0120/01/15 քրեական գործով հանդիսացել է Վարդան Ղուկասյանի փաստաբանը: Այնուհետև, թիվ 59100223 քրեական վարույթի շրջանակներում Տիգրան Արզաքանցյանի հայտարարության հիման վրա Վարդան Ղուկասյանի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել: Նշված քրեական վարույթում

փաստաբան Գեորգի Մելիքյանը ստանձնել է Տիգրան Արզաքանցյանի շահերի պաշտպանությունը:

ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Լ.Քաջազնունու գրության համաձայն՝ Գեորգի Մելիքյանը 27.04.2023թ. ճանաչվել է որպես տուժող Տիգրան Արզաքանցյանի լիազոր ներկայացուցիչ ու նույն օրը մասնակցել է վերջինիս և մեղադրյալ Արտակ Գալստյանի առերեսմանը:

Նույն գրության համաձայն՝ Գեորգի Մելիքյանը քրեական վարույթով նախաքննության ընթացքում որևէ ապացուցողական կամ վարույթային այլ գործողության չի մասնակցել:

Նշված գործով, ինչպես վերը նշվել է, Վարդան Ղուկասյանը հանդիսանում է Տիգրան Արզաքանցյանի հակառակորդ կողմը և նրանց շահերի միջև առկա է հակասություն, քանի որ Տիգրան Արզաքանցյանի հաղորդման հիման վրա Վարդան Ղուկասյանին առաջադրվել է մեղադրանք: Հետևաբար, 27.04.2023թ. տուժող Տիգրան Արզաքանցյանի լիազոր ներկայացուցիչ ճանաչվելն ու նույն օրը վերջինիս և մեղադրյալ Արտակ Գալստյանի առերեսմանը մասնակցելը ինքնին չի հաստատում, որ Տիգրան Արզաքանցյանի և Վարդան Ղուկասյանի շահերի միջև հակասություն առկա չէ:

Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում նաև արձանագրել, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով: Ինչպես երևում է, Օրենքով փաստաբանական գործունեության հասկացությանը տրված է լայն սահմանում, որի ուժով փաստաբանի և վստահորդի հարաբերությունների ամբողջ շրջանակը՝ ներառյալ փոխանցված տեղեկատվությունը, ապացույցները, փաստաբանի կողմից տրամադրված խորհրդատվության բովանդակությունն ու բնույթը: Ընդ որում, դատելով Օրենքի նշյալ սահմանումից, փաստաբանական գործունեությունը չի սահմանափակվում քրեական գործի ընթացքում ներկայացված՝ գործի հանգամանքներով, ապացույցներով և այլ տվյալներով և ընդգրկում է նաև փաստաբան-վստահորդ շփումների այն մասը, որը չի արտացոլվել քրեական գործի ընթացքում:

Ղեկավարվելով Օրենքի 5-րդ հոդվածի նշված իրավակարգավորումներով՝ Հանձնաժողովը փաստում է, որ միայն այն հանգամանքը, որ Փաստաբանը թիվ 59100223 քրեական վարույթի շրջանակներում ներկայացրել է նոր վստահորդի շահերն ընդդեմ նախկին վստահորդի՝ թեկուզև միայն ներգրավվելով գործում որպես նախկին վստահորդին հակառակ շահեր ունեցող անձի ներկայացուցիչ՝ բավական է խախտման փաստն արձանագրելու համար: Առավել ևս, որ Փաստաբանն այժմ էլ շարունակում է իրականացնել Տիգրան Արզանքանցյանի շահերի պաշտպանությունը՝ ըստ իր հայտարարության:

Հանձնաժողովը հիշեցնում է, որ փաստաբանը, հանդիսանալով իրավապաշտպան գործունեություն իրականացնող և քաղաքացիական հասարակության կարևորագույն ինստիտուտներից մեկը՝ փաստաբանությունը ներկայացնող անձ, ունի առանձնահատուկ սոցիալ-իրավական կարգավիճակ, որը չի սկսվում և ավարտվում միայն վստահորդի հանձնարարության պատշաճ կատարմամբ, այլ ընդգրկում է փաստաբանի իրավական և բարոյական պարտականությունների որոշակի ամբողջություն: Մասնավորապես,

փաստաբանը պետք է մշտապես գործի իր վստահորդի շահերին համապատասխան, և վստահորդի շահերը դասի իր շահերից վեր, անգամ այն դեպքերում, երբ նա արդեն նախկին վստահորդ է:

Օրենքով նախատեսված սահմանափակումն ուղղված է շահերի բախման դեպքում իրավաբանական օգնության արգելքին, ինչն իր հերթին կոչված է երաշխավորելու փաստաբանի կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ լիակատար անկախությունը՝ այդ թվում տարբեր շահերից, որոնք կարող են ազդել վերջինիս կողմից անձին իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ անկախ և բարեխիղճ լինելու վրա՝ ապահովելով վստահորդի շահերի արդյունավետ պաշտպանությունը, ինչպես նաև չվնասելով նախկին վստահորդին:

Նման մոտեցումը բխում է նաև փաստաբանության սահմանադրական-իրավական կարգավիճակից, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/2598/02/11 քաղաքացիական գործով 25.12.2012թ. որոշմամբ ներկայացված իրավական դիրքորոշումից, ըստ որի.

*«2. Իրավաբանական օգնության արգելքը*

*Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ օրենսդիրը, փաստաբանի համար նախատեսելով իրավաբանական օգնություն ցույց տալու համար համապատասխան երաշխիքներ, սահմանելով նրա հիմնական իրավունքները և պարտականությունները, նախատեսել է վերջինիս կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու և իր իրավունքների իրականացման որոշակի առանձնահատկություններ և սահմանափակումներ, որոնք ուղղված են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված փաստաբանության սկզբունքների, մասնավորապես անկախության և օրինապահության սկզբունքների ապահովմանը:*

*Այդ նպատակով օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ նախատեսված է, որ փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ցույց տալու այն դեպքում, երբ*

*1) առկա է հակասություն նույն հարցով իր կամ իր վստահորդների շահերի միջև.*

*2) տվյալ գործին մասնակցել է որպես դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննության մարմնի աշխատող, փորձագետ, թարգմանիչ կամ վկա, ինչպես նաև եթե նա հանդիսացել է պաշտոնատար անձ, որի իրավասության մեջ էր մտնում տվյալ անձի շահերից բխող որոշման ընդունումը.*

*3) ազգակցական, անձնական կամ կախյալ հարաբերությունների մեջ է գտնվում այն պաշտոնատար անձի հետ, որը մասնակցել կամ մասնակցում է տվյալ անձի գործի քննությանը.*

*4) պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը:*

***<u>Վերոնշյալ հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենքով նախատեսված սահմանափակումն ուղղված է շահերի բախման դեպքում իրավաբանական օգնության արգելքին, ինչն իր հերթին կոչված է երաշխավորելու փաստաբանի կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ լիակատար անկախությունը՝ այդ թվում տարբեր շահերից, որոնք կարող են ազդել վերջինիս կողմից անձին իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ անկախ և բարեխիղճ լինելու վրա՝ ապահովելով վստահորդի շահերի արդյունավետ պաշտպանությունը</u>***: *Այս սկզբունքն*

*ուղղակիորեն ամրագրված է նաև Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքների 14-րդ կետում, որի համաձայն՝ իրենց հաճախորդների իրավունքները պաշտպանելիս և արդարադատության շահերը պահպանելիս իրավաբանները պետք է նպաստեն ազգային և միջազգային իրավունքներով ճանաչված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանը և բոլոր պարագաներում գործեն անկախ ու բարեխղճորեն՝ օրենքին և ընդունված նորմերին ու իրավաբանի մասնագիտական բարոյականությանը համապատասխան:*»:

Բացի այդ, ՀՀ Սահմանադրական դատարանը թիվ ՍԴՈ 1263 որոշմամբ սահմանել է, որ *փաստաբանության խնդիրն է անձին որակյալ իրավաբանական օգնության տրամադրումը:* Ըստ այդմ, փաստաբանը հանդիսանալով իրավապաշտպան գործունեություն իրականացնող և քաղաքացիական հասարակության կարևորագույն ինստիտուտներից մեկը՝ փաստաբանությունը ներկայացնող անձ, ունի առանձնահատուկ սոցիալ-իրավական կարգավիճակ, որը չի սկսվում և ավարտվում միայն վստահորդի հանձնարարության պատշաճ կատարմամբ, այլ ընդգրկում է փաստաբանի իրավական և բարոյական պարտականությունների որոշակի ամբողջություն: Մասնավորապես, փաստաբանը պետք է մշտապես գործի իր վստահորդի շահերին համապատասխան, և վստահորդի շահերը դասի իր շահերից վեր, անգամ այն դեպքերում, **երբ նա արդեն նախկին վստահորդ է:**

Տվյալ դեպքում Կանոնագրքի 3.2.2 ենթակետը վկայակոչող (բլանկետային) կանոն է և գործում է Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի հետ միասին, և այդ կանոնների մեկնաբանման և սույն գործի փաստերի հետ համադրման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում Փաստաբանի կողմից այդ կանոնների խախտման փաստը:

**<u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>**

**Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝** *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝ …… նկատողություն… լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել:*

**Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝** *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

**Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝** *լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը

հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը՝ մասնավորապես այն, որ խախտումն իր բնույթով խաթարում է փաստաբանի վստահելիությունն ու վնասում է փաստաբանի մասնագիտական գործունեության վերաբերյալ հանրային ընկալմանը: Հանձնաժողովը հաշվի է առնում նաև Փաստաբանի մեղքի աստիճանը՝ մասնավորապես այն, որ առկա պայմաններում Փաստաբանը պարտավոր էր գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթն ու թույլ չտալ այդպիսի վարքագիծ: Միևնույն ժամանակ Հանձնաժողովը հաշվի է առնում Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները՝ մասնավորապես կարգապահական տույժերի բացակայությունը, ինչից ելնելով՝ Հանձնաժողովը վերոգրյալի համակցված գնահատման արդյունքում Փաստաբանի նկատմամբ որպես հիմնական կարգապահական տույժ կիրառում է «նկատողություն», ինչպես նաև՝ որպես լրացուցիչ կարգապահական տույժ՝ «լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել»՝ «Դեոնթոլոգիա» թեմայով, Փաստաբանի հաշվին, 4 ակադեմիական ժամ ժամաքանակով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 11.1-րդ հոդվածի 3–րդ մասի 1–ին կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի և 39.7-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներով, Հանձնաժողովը՝

***Ո Ր Ո Շ Ե Ց՝***

***1. Փաստաբան Գեորգի Գրիգորի Մելիքյանի (արտոնագիր՝ թիվ 1798) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ «իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն»՝ «Դեոնթոլոգիա» թեմայով, 4 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ «Փաստաբանության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.2.2 ենթակետի խախտման համար:***

***2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:***

**<u>Ծանոթություն.</u>** Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

**ՀՀ փաստաբանների պալատի**
**կարգապահական հանձնաժողովի**
**նախագահ՝** **Տաթևիկ Շալջյան**

**թիվ ԿԳ-23027-2-Ա**
**09 նոյեմբերի 2023թ.**
**ք. Երևան**